

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՅԻ

ՊՐԱԽՈՍԼԱՆ ԵԿԵՂԵՅԻ

(Церк. Вѣст.)

Կիեվի պեչերեան մայրավանքից տեղափոխուեցին Պօլոցկ ս. Եփրսինիա պլոցկայեայի նշխարները նրա շինած վանքը: Նշխարների տեղափոխութեան հանդէսները սկսուեցին ապրիլի 22-ին և վերջացան մայիսի 23-ին: Հանդէսին մասնակցում էին ամեն դասակարգերը սկսած արքայական տանից, բարձր հոգևորական դասից մինչև հասարակ ժողովուրդը: Կրօնական ոգևորութիւնը մեծ էր, որ արտայայտում էր հոգևոր երգերով և թափօրներով: Սրբուհի Եփրսինիայի նշխարները տեղափոխուեցին «Գոլովաչև» շողենաւով Գնեսլը գետի վերայով:

Церк. Вѣст.-ը գրում է.

Սրբուհի Եփրսինիան 700 տարուայ տարակայութիւնից յետոյ վերադառնալով իւր ծննդավայրն ու իւր տարակայութիւնից յետոյ բաղձատանջ դաւառը, բերեց իւր հետ հոգևոր կար և քաջալերութիւն ուսուս—պրաւոսլաւ հաստատութիւնների կացութեան ապագայ սխրագործութիւններին:

Սրբ. Սինօքը կարգել էր մի յոնձնաժողով, որ պէտք է մշակէր հոգևոր դպրոցների ծրագիրը, յարմարեցնելով այն սաների ապագայ պաշտօնավարութեանը և ժամանակակից դիտութեան հիմունքներին: Արձակուրդներին անկասկած, բոլոր ծրագրերը պատրաստ կըլինեն, բայց կիրառութեան մէջ գնելը դժուարութեան կը հանդիպի, դրա համար էլ հաւանական է, որ այս տարուայ սկզբից չը գործադրուի:

Մօտիկ ժամանակներում Կիեվում կազմուել է «կրօնօւսոյցների եղբայրութիւն», որ կազմել են իրանք, կրօնօւսոյցները: Մշակուած կանոնադրութեան համեմատ կրօ-

նուսոյցների եղբայրութիւնը, յանուն Րոստովի միտրոպոլիտ Ս. Դիմիտրիի, նպատակ ունի կրօնական-բարոյական դաստիարակութիւնը միջնակարգ դպրոցներում բարւոքելը։ Դրա համար եղբայրութիւնը ծրագրում է կազմել ժողովներ, կազմակերպել աստուածաբանական պարբերական գրոյցներ միջնակարգ և բարձր ուսումնարանական հաստատութիւնների աշակերտների համար, ստանալ աստուածաբանական և մանկավարժական գրքեր և լրագրեր ելն։

Իսկական անդամներ կարող են լինել կրօնուսոյցները, և բոլոր վարչութիւնների դպրոցների ղեկավարները։ Անկառիկած, ամենաբեղմնաւոր ջանքը կըլինի կրօնի դասաւանդութեան լաւ ծրագիր կազմելը համապատասխան մանկավարժութեան պահանջներին։ Եւ այս կարելի է մշակել կրօնուսոյցների ժողովներում, ուր կարծիքների կենդանի փոխանակութիւնը կարող է առաջ բերել եռանդ, վերացնել դասաւանդութեան թերութիւնները, օգէտորել նոր օգտակար փորձեր անելու։ Դրա համար էլ, ասում է Церк. Вѣст. ցանկալի են Կիւեի կրօնուսոյցների եղբայրութեան պէս ընկերութիւնները։

Վարչաւայի համալսարանի խորհրդի միջնորդութեան համեմատ լուսաւորութեան նախարարութիւնը թոյլ է տուել հոգեւ. սեմինարիայի VI և V-րդ դասարանների դասընթացք աւարտողներին, որոնք ուստերէնից, հին լեզուներից, մատեմատիկայից 4 և նոր լեզուների մէկից բաւարար նշան ունեն, ա. առանց քննութեան ընդունելու լեզուաբանական, իրաւաբանական և բժշկական բաժինները. բ. մատեմատիկայից և ֆիզիկայից համալսարանում քննելով ընդունել ֆիզիկո—մատեմատիկական բաժինը։ Նոր լեզուներից (ֆրանսերէն կամ գերմաներէն) անբաւարար նշան ունեցողներին և 4-ից պակաս ունեցողներին յիշատակուած առարկաներից՝ քննել համալսարան ընդունելի։

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՅԻ

Յունաց Պատրիարքն հետեւեալ յայտարարութիւնսն Երբն Երբն է Սեւանիկի Ֆարօս լրագրին Պոլսոյ թղթակցին. — «Պատրիարքարանին և կառավարութեան յարաբերութիւններն առ Երեւոյթս լաւ են, բայց եթէ ի նկատ առնուի Յոյն տարրին դէմ ցոյց արուած ընթացքը, կտեսնուի թէ այս յարաբարութիւնք գոհացուցիչ չեն: Նախ և առաջ կայ դպրոցական հարցը. որ քրիստոնեայ ժողովուրդներուն համար մահու և կենաց խնդիր է: Առանց վարանելու կրնանք ըսել թէ կառավարութիւնը սխալ քայլ արաւ այս խնդրոյն մէջ: Այս խօսքերը կըսեմ, որովհետեւ կսիրեմ մեր սահմանադրական կառավարութիւնը: Նախարարներն հայրենասէր մարդիկ են, բայց դժբախտաբար այս խնդրոյն մէջ հետապնդուած հայեցակէտը սխալ է: Սակայն տեղ վարժարաններ կրիակուին: Երբ դիմում կընենք, կառավարութիւնը կպատասխանէ թէ այնպիսի հրաման չէ տուած: Բայց պաշտօնեայ մը մինչև որ իր մեծէն հրաման չստանայ, չի միջամտեր այսպիսի գործի մը: Կառավարութիւնն եթէ կուզէ մեզի ապահովութիւն ներշնչել, պէտք է պատժէ այնպիսի ընթացքի մէջ գտնուող պաշտօնեաները: Ո՛վ որ ալ գտնուի Պատրիարքական Աթոռին վրա, չի կրնար երբէք հանդուրժել որ վտանգուին եկեղեցական և դպրոցական առանձնաշնորհումները: Եթէ հարկ ըլլայ, պատրաստ ենք կեանքերնիս իսկ զոհելու ասոր համար:»

(Բիւզանդիոն)

Պաղեստինում արաբ և յոյն օրթոդոքսների մէջ ծագած տարաձայնութիւնները դեռ չեն վերջացել: Զատիկի օրերին հասել է Երուսաղէմ նոր նահանգապետը, որ կոչելով իւր մօտ արաբ կուսակցութեան ներկայացուցիչներին յայտնեց որ հասարակաց, խաղաղութիւն վրդովողները խիստ պատժի կենթարկուեն. նրանց մի քանի պահանջները

դէպի յոյները համարեց անհիմն: Մի և նոյն ժամանակ նահանգապետը միջոցներ ձեռք առաւ մի քանի անձանց դէմ, որոնք փորձում էին Լիդդի վանքից արտաքսել յոյն վանահօրը և տիրել այդ վանքին: Հասած տեղեկութիւններից երևում է, որ թուրքաց կառավարութիւնը վերջնականապէս որոշել է իւր վճիռը արաբ—յունական խնդրի վերաբերութեամբ, բայց մանրամասնութիւնները դեռ յայտնի չեն: Բայց կառավարութեան ձեռնարկութիւնների ուղղութիւնը ընդհանրապէս բարեյաջող են Սուրբ—գերեզմանի միաբանութեան համար:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

Պիոս Ժ. պապը կարգինալ Կարլ Բօրրովիչ-ի սրբացնելու 300 ամեակի առիթով մայիսի 25-ին մի էնցիկլիկ տուեց, որ հրատարակուեց նոյն ամսի «Osservatore Romano»-ում: Այս էնցիկլիկով պապը օրհնում է XVI-դարի կրօնական բարեփոխութեան ժամանակ հռովմէականութեան ջադադողների յիշատակը և պախարակում հակառակորդներին՝ նրանց այսպէս բնորոշելով:

«Այս թշուառութիւնների մէջ, դրում է պապը, երեւան էին գալիս հպարտ և խառնակիչ մարդիկ—Քրիստոսի խաչի թշնամիներ—աշխարհային հակումներով մարդիկ, որոնց Աստուածը որովայնն է (Փիլպպ. գ. 18—19): Նրանք ձգտում էին ոչ թէ բարբերը ուղղելու, այլ հերքելու դաւանութիւնը և բազմացնելու անկարգութիւնը. ներմուծում էին սանձարձակութիւնը, արհամարհում էին եկեղեցու հեղինակաւոր ղեկավարութիւնը, աւելի փչացած իշխանների ու ժողովուրդների մոլութիւնները օրինակ առնելով, բռնութեամբ եղծանում էին եկեղեցու վարդապետութիւնը, կազմն ու կարգապահութիւնը, նմանելով ամբարիշտներին՝ դէպի որոնք ուղղուած է «վայ ձեզ, որ բարին չար և չարը բարի էք ասում» (Ես. ե. 20), նրանք այս խռովարար, ըմբոստ արատաւորները կոչում էին բարենորոգիչներ: Բայց իսկապէս նրանք մոլորեցուցիչներ էին»

և վէճերով ու պատերազմներով թուլացրին Եւրոպան և, նախապատրաստեցին նոր ժամանակի ըմբոստութիւն ու հերձուածը:

Բողոքականները այս էնցիկլիկով իրանց վիրաւորումը զգալով՝ սաստիկ քննադատում են նրան. մինչև անգամ՝ պրոուսական երեսփոխանական ժողովում (պարլամենտ) այս առիթով ազգային—ազատամիտներն ու պահպանողականները հարցապնդումն են արել կառավարութեանը: Մի քանի լրագրներ պահանջում են յետ կոչել Վատիկանից պրոուսական դեսպանին:

«Россия» — լրագրում կարդում ենք, որ Հռովմայ Պապի վերջին էնցիկլիկան Սաքսոնիայում էլ մեծ վրդովմունք է առաջ բերել, և թագաւորը, թէև կաթոլիկ, իւր բողոքական հպատակներին հանդարտեցնելու համար յայտնել է, որ ինքը ուղղակի կը բողոքի պապին: Դիմումն են արել Աւստրիայի ու Բաւարիայի, Վատիկանում եղող, դեսպանները:

— Պապը, որ շատ սակաւ անգամ է կարդինալներին ժողովի հրաւիրում կրօնական—քաղաքական խնդիրների առիթով խորհրդակցելու, այս անգամ խորհրդի է հրաւիրել: Բամպոլլան ակնածութեամբ յայտնել է, որ էնցիկլիկան անյարմար էր հրատարակել, բայց միանգամ որ հրատարակուել է, էլ յետ չըպէտք է կոչել: Էնցիկլիկան հրատարակելիս Վատիկանը աւելի կրօնական տեսակէտով է առաջնորդուել քան քաղաքական: Եւ յարուցուած չփոթութեան պատճառով պետական քարտուղար (ստատս սեկրետար) Մերրի Դել—Վալի դրութիւնը բաւական խախտուած է: Նրա հաւանական յաջորդ համարւում է Բամպոլլան, որ հրաժարուելու գէպքում՝ կարդինալ Ֆլօրենցելին:

Նոյն «Россия» լրագիրը անհելով Times-ից՝ մէջ է բերում այն գիմումն, որ արել է պրոուսական կառավարու-

Թիւնը Վատիկանին, այնտեղի իւր գեապանի միջոցով, յայտնի էնցիկլիկաի պատճառով, որով վիրաւորուած է բոլոր քրիստոնէսներին զգացմունքը: Դեապանը առաջարկել է Վատիկանին, ի սէր այն լաւ յարաբերութեան, որ կայ գերմանական կառավարութեան և Վատիկանի մէջ՝ նոյն էնցիկլիկան չըհրատարակել գերմանական կաթոլիկ թեմական լրագրներում և չըծանուցանել եկեղեցիներում՝ և առհասարակ խուսափել նմանօրինակ էնցիկլիկաներից:

Վատիկանը պատասխանել է պրուսական գեապանին, ցաւ յատնելով, որ էնցիկլիկային այնպիսի մեկնութիւն է տրուում, որ ամենեւին ցանկալի չէ պապին, և նորին Սրբութիւնը այդ էնցիկլիկով չէ կամեցել վիրաւորել որ և է մէկին: Վատիկանը յայտնել է, որ արդէն պատուիրած է գերմանական պետութեան մէջ կաթոլիկ եկեղեցիներում չըծանուցանել և թեմական լրագրներում էլ չըհրատարակել յիշեալ էնցիկլիկան:

Սպանիանի Կանալիսասի ազատամիտ նախարարութիւնը իւր ծրագրի մէջ մտցրել է մաքառումն կղերականութեան դէմ, որի պատճառով սաստիկ վրդովուած է Սպանիայի բարձր հոգևորականութիւնը:

Ամենից առաջ նախարարութիւնը կամենում է միջոցներ ձեռք առնել սաստիկ բաղմացած վանքերի ու վանականութեան դէմ, նրանց վերաբերութեամբ գործադրելով ընկերութիւնների մասին օրէնքը, այն է, որ այդ միաբանութիւնները, բացի 1853 թուին թոյլատուած երեքից, իրանց գոյութեան համար անմիջապէս օրինական թոյլտուութիւն խնդրեն պետութիւնից: Սպանիայի եպիսկոպոսները ֆրանսիականի նման միահամուռ դիմել են Կանալիսասին առարկելով, թէ կաթոլիկութիւնը լինելով պետական կրօն, պետութիւնը պարտաւոր է ճանաչել եկեղեցական բոլոր հաստատութիւնները, ուրեմն և քաջալերել գոյութիւն ունեցող միաբանութիւնները: Եպիսկոպոսները նականների մասին հիմնուում են տրիդենտեան ժողովի

կանոնների վրայ, որ օրէնքի ոյժ ունի Սպանիայում, և այս մտքով են քայտարում սպանիական սահմանադրութեան այս մասին յօդուածները:

Ի պատասխանի՝ Կանալիիսաւր յայտնել է Տօլեդայի արքեպիսկոպոս Կարդինալ Ալվարէս-Ի-Գարսիային, թէ միաբանութիւնների մասին խնդիրը մտնում է այն ընդհանուր խնդիրների մէջ, որ պէտք է նկատ առնուեն կօնկօրդատի քննութեան ժամանակ, որի համար անմիջական քանակցութիւն է սկսուած վատիկանի հետ:



Պապը ընդունելով սպանական ուխտաւորներին յայտնել է, որ Սպանիան առ պապը տաժաժ սիրոյ մէջ դերաշահնցում է ըսրր երկրներին, և յօրգորել է ուխտաւորներին անխախտ պահպանել իրանց հաւատը, կրօնական սուրբ սկզբունքները, և այդ թանկագին հարստութիւններին սպառնացող վտանգների դէմ՝ մաքառել:



ԲՈՂՈՒՄԿԱՆ ԵՆԵՂԵՑԻ

Սաքսոնիայի Խեմնից քաղաքում մայիսի 17—18 ն. տ. գումարուել է աւետարանական—սօցիալական XXI համաժողովը, որին մասնակցել են մինչև 2000 հոգի: Համաժողովի նախագահ պրօֆ. Ա. Հառնակը իւր ճառում այս անգամ էլ կանգնեց իւր սիրած այն մաքի վերայ թէ զարգացնելով և կատարելագործելով պետական ու հասարակական սօցիալական հաստատութիւնները մշակների հովանաւորութեան խնդրում, պէտք է լրջօրէն հոգալ, որ սօցիալական օգնութիւնը ում ցոյց է տրուում, նրանց մէջ չլթուլացնի անձի ազատ գործունէութեան ոյժը, անձի, որ, ամեն մի մարդկային ընկերութեան կարևոր գոծօնն է, առանց որի ժողովուրդը անխուսափելիօրէն մերձենում է գլորման: Այս տեսակ հետեւանքի առաջը առնելու համար նա լաւագոյն միջոցը համարում է ներքին ազատութիւնը զարգացնելը, ինքն իրան պատասխանատու կացնելը և

պատանեկութեան ժամանակ ոյժը գործունէութեան մէջ մարզելը:

Կրթութեան խնդրի հետ Հառնակը շօշափեց սեռական գործարանների և ամուսնութեան խնդիրը, որ այնպիսի ուժով առաջ է եկել վերջին երեք տարիներու: Այս դէպքում՝ նրա կարծիքով ոչ ինչ չէ մնում անել, բայց միայն գիմել նոյն միջոցին, — բարոյական ազդեցութեանը և բարոյական անկախութիւն գարգացնելուն. ընտրութիւն պէտք է անել ամուսնութեան և խառնագնաց կեանքի մէջ, երկրորդ միջոց չըկայ: Ով կարծում է, թէ միջին ճանապարհ կայ, նա մոլորեցնում է ժողովրդին, և խախտում է մեր բարքերը:

Այս տեղից կարելի է տեսնել, որ սօցիալական խնդիրներում ամենալաւ հիմքն է դարձեալ քրիստոնէական բարոյականութիւնը: Ըստ Հառնակի՝ այս սկզբունքով պէտք է առաջնորդուի, ով ցանկանում է հայրենիքի իսկական բարիքը, ինչ դաւանութեան կամ ուղղութեան էլ պատկանի նա: Նախագահի այս ճառից յետոյ Լայպցիգի պատասօր Լիբստերը համեմատելով քրիստոնէական կրօնն ու սօցիալական հայեացքները՝ ասաց որ նրանք թէև բոլորովին այլ հիմունքներ ունին, բայց կարող են իրար լրացնել, և քրիստոնէական կրօնն կարող է հեռացնել սօցիալական նիւթ ապաշտութիւնը:

